“ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ N 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ”

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍԱՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա ՝ երաժշտություն

Մասնակից ՝ Դերենիկ Դեմիրճյանի N 27 հիմնական դպրոցի ուսուցիչ՝ Հովհաննիսյան Օվսաննա Աշոտի

Ղեկավար՝ Խրիմյան Հռիփսիմե

Թեմա՝ ՝Ազգային մշակութային արժեքների ձևավորումը ՞Երաժշտություն՞ առարկայի դասավանդման ընթացքում՞

2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տիտղոսաթերթ. 1
2. Բովանդակություն…….2
3. Ներածություն……..3-4
4. Ազգային մշակութային արժեքների ձևավորումը ,,Երաժշտություն,, առարկայի դասավանդման ընթացքում:
   Մաս 1…….. 5-7
5. Մաս 2……8
6. Մաս 3. 9-13
7. Եզրակացություն. 14
8. Հավելված (օգտագործված գրականության ցանկ)……..15

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման գործում տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործնթաց է, որն ուղղված է այն կարողությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող,որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզողնի ընդլայմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացման գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացմունքների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը:

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար: Երաժշտության փորձարությունը կարող է նրա համար արդյունավետ լինել լեզվական,ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար՝ միաժամանակ նպաստանոր պայմաններ ստեղծել սոցիալականացման համար:

Ինչ վերաբերվում է ազգային մշակութային արժեքներին՝ ժողովրդական ստեղծագործությունը ազգային մշակույթի ինքնատիպ և գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող բնագավառներից է:

Ուսումնառության նպատակը և խնդիրները՝

…Ծանոթացնել ազգային ժողովրդական երաժշտության դասական, գեղարվեստական բարձրարժեք և պատմա-ճանաչողական մեծ նշանակություն ունեցող նմուշներին:

…Մշակել ժողովրդական երգերի գաղափարական-կերպարային բովանդակության բացահայտման, ինչպես նաև ոճական ու լեզվական արանձնահատկությունների վերլուծման ունակություններ:

…Ծանոթացնել ժողովրդի ձեռք բերած երաժշտական արտահայտչականության ողջ կոմպլեկսին, որը կօգնի նրան ժողովրդական երգերի գեղարվեստական արժեքների սահմանման մեջ ճիշտ կողմնորոշվել, ազգային երաժշտության ինքնատիպության հարցերը գիտականորեն հիմնավորել:

… Սեր արթնացնել դեպի հայրենի ժողովրդական երգը. կոմպոզիտորի ստեղծագործության մեջ ժողովրդական երգին արժանի տեղ հատկացնելը ազգային ոգին պահպանելու ճանապարհներից մեկն է:

… Ուսման պրոցեսում տեսական մասը անհրաժեշտ է զուգորդել գործնական աշխատանքների հետ:

… Դաստիրակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր:

… Հայ երեխայի երաժշտական դաստիրակության հիմքում դնել ազգային երաժշտությունը, չբացառելով դասական կոմպոզիտորների ստեղծագործությունները:

Ազգային մշակութային արժեքների ձևավորումը

«Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում

Մաս 1

Երաժշտությունը՝ որպես մշակույթի բարձրակարգ արվեստ

« Հայ երաժշտությունն իր մեջ կսնուցանե իր իսկ ցեղին,որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին: Հայն ունի ինքնուրույն երաժշտություն… Յուրաքանչուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելևէջներեն կծնի ու կծավալվի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնարավորությունը, ուրեմն և համապատասխանող երաժշտությունը:

Կոմիտաս

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում ունի իր առանձնահատկությունները, որով և տարբերվում է մյուս առարկաներից:

Երաժշտության դասին սովորողների գործունեությունը կապված է «կենդանի» երաժշտության հետ: Նրանք լսում են երաժշտություն երգում կատարում երաժշտառիթմական շարժումներ, պարում, նվագում, ստեղծագործում և այդ ամենից ստանում երաժշտագեղագիտական տպավորություններ, հույզեր, զգացմունքներ, որոնք էլ ձևավորում և զարգացնում են սովորողների հոգևոր աշխարհը, գեղարվեստական ընկալումները, ստեղծագործական երևակայությունը, գեղագիտական ճաշակը, շրջապատում, կյանքում գեղեցիկը տեսնելու և արարելու կարողությունները:

Երաժշտությունը, ինչպես մայրենի լեզուն, ազգի մտածողությունը, ինքնուրույնությունն ու գոյությունը պահպանող միջոց է:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասավանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիրակության բնագավառի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Ազգային մշակութային արժեքների ձևավորումը «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում նպաստում է ոչ միայն անհատի ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանն ու դրսևորմանը, այլև անցյալի գեղարվեստական փորձի, ազգային ու համամարդկային մշակութային արժեքների յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը: Երաժշտությունը սովորողների մեջ արմատավորում է մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացմունքներ, բարոյահոգեբանական նկարագիր, գեղագիտական աշխարհայացք, ազգային արժանապատվության խորը գիտակցում և հայրենասիրություն:

Ազգային երաժշտության միջոցով հնարավոր է դառնում հումանիզացնել կրթության և դաստիրակության գործընթացը, որը մեր ժամանակի կարևոր պահանջներից մեկն է:

Մեծ է նաև երաժշտության դաստիրակչական ու ճանաչողական նշանակությունը սովորողների աշխարհայացքային և արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում: Ազգային մշակույթը պարունակում է հսկայական կրթադաստիրակչական ներուժ՝ միջառարկայական կապեր ստեղծելով արվեստների և ֆիզիկական դաստիրակության, հումանիտար և բնագիտական առարկաների միջև: Երաժշտությունը մյուս առարկաներին հուզազգացմունքային լիցք հաղորդելով,նպաստում է սովորողների կարողությունների ակտիվացմանը, մտավոր և հոգևոր ներուժի բացահայտմանը և զարգացմանը: Երաժշտությունը օգնում է սերունդներին փոխանցել ազգային ոգին և ծանոթացնում մեր նախնիների հոգևոր կյանքին:

Որպեսզի այսօր իրական դառնա մեր ազգի զարթունքը, հույժ կարևոր է առաջնային տեղ տալ գեղագիտական դաստիրակության առարկաներին՝ երաժշտությանը, կերպարվեստին,պարարվեստին: Քանզի «…ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ, ավելի արդյունավետ խրախուսել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը…», - գրում է Խ.Աբովյանը: Որքան սովորողները ավելի տեղյակ լինեն իրենց պատմական և մշակութային պատմությանը, այդքան ավելի կձգտեն պահպանել իրենց գոյությունը, ինքնուրույնությունը և դիրքն այլ ազգերի ու մշակույթների հետ փողշփվելիս,կրճատեն սեփական թերություններն ու բացերը, քանի որ մշակութային ինքնությունը հզորանում և կենսունակ է դարձնում նրանց:

Մշակութային արժեքների, այդ թվում երաժշտական արժեքների պահպանումը հասարակական պարտավորություն է: Մշակութային հասկացությունների և ազգային

արժեքների և ավանդությունների փոխանցումը կարևոր խնդիր է հասարակության մշակութային պատասխանատուների համար, և ամենուր արվեստն այս նպատակին հասնելու կարևոր գործոն է:

Մաս 2

«Գեղեցիկը տեսնողը մասնակից է նրա արարմանը»

Քրիստիան Բոուվի

Արվեստը՝ մարդկային գործունեության հատուկ ձև է, որն իրականությունում արտացոլում է գիտակցության մեջ գեղարվեստական պատկերների, կերպարների տեսքով: Աշակերտները պետք է ծանոթանան արվեստ հասկացողությանը: Արվեստը դիտվում է որպես հոգևոր մշակույթ անձի ձևավորման ու զարգացման, աշխարհը ճանաչելու, գեղեցիկը ըմբռնելու անգնահատելի միջոց: Ցույց է տրվում արվեստի կրթադաստիրակչական, իմացական, ճանաչողական և հաղորդակցական նշանակությունը: Ուսուցիչը պետք է օգտագործի արվեստի բարերար ներգործության ուժը՝ սովորողների մարդկային լավագույն որակների, հույզերի, զգացմունքների պատկերացումները ձևավորման ու զարգացման գործընթացում: Սովորողի գեղագիտական զարգացմանը նպաստող ամենակարևոր հանգամանքներից մեկը երաժշտության միաձուլումն է արվեստի մյուս ճյուղերի՝ գրականության, կերպարվեստի կինոյի, թատրոնի հետ, որոնք ունեն շատ ընդհանրություններ: Դա հնարավորություն է տալիս երաժշտության մեջ տեսնելու գույնային կերպարներ, նկարի մեջ լսելու հնչյունային պատկերներ, զգալու երաժշտական հնչերանգը:

Ըստ հույն փիլիսոփայի՝ Արիստոտելի,գրականությունը պատկերավոր կերպար է, որը արտացոլում է կյանքի դեպքերը և ապրումները, երաժշտությունն արտահայտում է ապրումներ և բարոյական որակներ, պարարվեստը պատկերում է պլաստիկ շարժումներով հաղորդում մարդկանց վիճակ և գործողություններ:

Արիստոտելը արվեստը դիտում էր որպես մայր բնության ընդօրինակ:

Մաս 3

Երաժշտության դերը տարրական և միջին դպրոցների աշակերտների դաստիրակության գործում

«Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիրակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիրակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է:Սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը»:

Կոմիտաս

Տարրական դպրոցում աշակերտները լսում և երգում են բազմաբնույթ և բազմատեսակ ստեղծագործություններ, կուտակում բազմապիսի երաժշտական տպավորություններ, երաժշտապես զարգանում, ձեռք բերում երաժշտություն ունկնդրելու և կատարելու փորձ, ծանոթանում ազգային մշակութային արժեքներին, որոնք էլ ապագայում նպաստում են միջին դասարանների «Երաժշտություն» առարկայի չափորոշչային պահանջների կատարմանը:

Առաջին դասարանում ուսուցվող և ունկնդրվող ստեղծագործությունների բովանդակությունը կապված է դպրոցի, տարվա եղանակների, Նոր տարվա տոնի և կյանքի այլ երևույթների հետ: Այդ բոլոր ստեղծագործությունները նախատեսված են թե՝ ուկնդրելու և թե՝ երաժշտառիթմական ու պարային շարժումներ կատարելու համար: Երեխաների երաժշտական դաստիրակության հիմքում դրված է ուսուցման թեմատիկ սկզբունքը: Թեմատիկան այնպես է ընտրված, որ երեխաներին աստիճանաբար տանում է դեպի երաժշտության մեծ ու հրաշալի աշխարհը, նրանց մեջ ձևավորում է գեղեցիկի զգացողություն, արմատավորում այնքան երաժշտական տպավորություններ, որ բարձր դասարաններում այդ հիմքով ավելի է հեշտանում երաժշտության խոր և բազմակողմանի ընկալումը:

Առաջին դասարանում պետք է հատուկ ուշադրություն դարձնել ազգային մշակութային արժեքների ձևավորմանը: Երաժշտության ունկնդրման նպատակը դպրոցում սովորեցնել ուշադիր լսել և հասկանալ երաժշտությունը, ցույց տալ երաշտության գեղեցկությունը, կարողանալ գնահատել այն, ունենալ սեփական կարծիք և պատկերել երաժշտությունը նկարների մեջ: Նկարների միջոցով երեխաներին ծանոթացնել Երևանի մշակութային կենտրոններին՝ «Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, դրամատիկ, տիկնիկային,

Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոններ , Ա.Խաչատրյանի ֆիլարմոնիկ մեծ դահլիճ…….,Ազգային պատկերասրահ…., կինոթատրոններ….» և այլն: Երաժշտության պարապմունքներին երեխաների երաժշտական գործունեությունը դառնում է ակտիվ, երբ երեխան ներգրավվում է երաժշտության շարժումային ոլորտը և սկսում երգել ու կատարել համապատասխան շարժումներ, որն էլ երաժշտության ընկալումը դարձնում է ամբողջական: Հայկական ժողովրդական երգերի ուսուցումը կարևոր նշանակություն ունի՝ առաջինը այդ երգերի միջոցով երեխաները ծանոթանում են մեղեդու ձայնաստիճաններին և դրանց անուններին, ձեռքի նշաններին, ստանում երաժշտատեսական գիտելիքներ, երկրորդը՝ այդ երգերի ուսուցմամբ նրանք ճանաչում են ժողովրդական երգը, ծանոթանում հայկական պարային շարժումներին: Ուսուցվող երգերի մի մասն էլ հայ և այլազգի բանաստեղծների և կոմպոզիտորների համատեղ ջանքերով ստեղծված երգեր են, որոնք հատուկ գրված են երեխաների կատարման համար:

Մարդկային կյանքի աչքի զարնող երևույթներից մեկն էլ պարն է: Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը: Ձեռքերի և մատների, գլխի և իրանի շարժումներով կարելի է որոշել ազգային պատկանելոիթյունը: Պատահական չէ, որ այդ երկու արվեստները, ժամանակի ընթացքում մեկը մյուսին լռացնելով, զարգանալով, ստեղծել են պարերգեր, որոնք զգալի տեղ են գրավում հայկական ազգային երաժշտության մեջ:

Զարգացնելով պարի և երաժշտության կապը՝ մարդը ստեղծել է բալետ, թաթերականացված բեմական ժանրեր, որոնք պարային շարժման միջոցով արտահայտում են մարդկային տարբեր մտքեր,տրամադրություններ, զգացմունքներ և հույզեր:

Կոմիտասն իր ուսումնասիրություններում հատուկ ուշադրություն է դարձրել պարին, նրա դաստիրակչական նշանակությանը, շարժումների առանձնահատկություններին: Դրանց միջոցով հնարավոր է դառնում արտահայտել ոչ միայն զգացմունքներ, այլև մտքեր: Բոլոր ժամանակներում պարերը կապված են եղել ծեսերի, սովորույթների, ավանդությունների, կենցաղի հետ:

Երկրորդ դասարանում աշակերտները ծանոթանում են երգ,պար,քայլերգ պարզ ու մատչելի տեսակներին: Երաժշտության այս տեսակները սովորողների երաժշտական մտածողության զարգացման հիմքն են դառնում, քանի որ չկա երաժշտության մի

բնագավառ՝ լինի դա օպեռա, բալետ թե սիմֆոնիա ուր չլինի երգային, պարային, քայլերգային բնույթի հատվածներ:

Երգը, պարը, քայլերգը դառնում են այն « կամուրջը», որով երեխաները մտնում են երաժշտության «մեծ աշխարհը»: Լսելով փոքր հատվածներ օպերաներից, բալետներից և սիմֆոնիաներից, նրանք ճանաչում են այդ ստեղծագործությունների մեջ հնչող, իրենց ծանոթ երաժշտության տեսակները: Համեմատության և վերլուծության այդպիսի եղանակներով հնարավոր է դառնում երեխաների հաղորդակցումը երաժշտության խոշոր ձևերի՝ օպերա, բալետ, սինֆոնիա ժանրերի հետ:

Երրորդ դասարանում երեխաները ծանոթանում եմ ազգային մշակույթի լավագույն ներկայացուցիչներից՝ Ա.Սպենդիարյանի, Ա.Խաչատրյանի, Է.Միրզոյանի, Ռ.Պետրոսյանի, Տ.Մանսուրյանի, Գ.Չթչյանի, ունկնդրում Տ.Հեքեքյանի «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երչախմբի կատարումները, երգում և ունկնդրում կոմպոզիտորների ստեղծագործությունները և երգերը, ձերք են բերում երաժշտական փորձ, տեսական գիտելիքներ: Ձերք բերած տեսական գիտելիքները, կարողությունները և հմտությունները խորացվում ու կայունացվում են համապատասխան երաժշտական ստեղծագործությունների ուկնդրման և կատարման միջոցով:

Չորրորդ դասարանի աշակերտները ծանոթանում են հայկական ժողովրդական երաժշտության տեսակներին, թեմատիկային, կառուցվածքին, երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններին:

Աշակերտները իմանում են, որ հայ ժողովրդի երաժշտության մեջ մտնում են ոչ միայն ժողովրդական, այլև հոգևոր, աշուղագուսանական և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնք միասին կազմում են հայ ազգային մշակույթը: Ծանոթանում են ծիսական երգերին և ժողովրդական ավանդույթներին, ավելի խորը ուսումնասիրում են հայ կոմպոզիտորների կենսագրությունը կատարում և ունկնդրում նրանց ստեղծագործությունները: Այդ ամենը ուսումնասիրելուց հետո և խորը գիտելիքներ ամբարելով հաճախ նրանց դասերը կարելի է անցկացնել համապատասխան տուն-թանգարաններում:

Չորրորդ դասարանում երեխաները ծանոթանում են ժողովրդական նվագարաններին:

Հին և միջնադարյան Հայաստանում, հայոց կյանքում, հսկայական դեր են կատարել հայ ազգային նվագարանները՝ հատկապես հայ ժողովրդի գեղագիտական հայացքների ձևավորման և զարգացման գործում: Հայ ժողովուրդը դարեր ի վեր ենթարկվելով լուրջ ասպատակությունների, ճակատագրի բերումով ցրվել է աշխարհով մեկ՝ իր հետ տանելով և պահպանելով մի երգ, մի մասունք, մի տաղ ու մի նվագարան:

Ժողովուրդը դարեր շարունակ իր հոգուն հարազատ երգերը և պարերը կատարել է նաև իր ստեղծած նվագարաններով: Կոմիտասը, հայկական ժողովրդական երգի գիտակ և լավ կատարող լինելուց բացի, նվագել է նաև շնչական «փողային» նվագարաններով: Նրա սիրելի նվագարաններն են եղել սրինգն ու բլուլը:

Միջին դպրոցում աշակերտները ծանոթանում են արվեստների ընտանիքին «երաժշտություն, գրականություն, պարարվեստ, կերպարվեստ, թատրոն և կինոարվեստ» որպես մարդու հոգևոր զարգացման, հույզերի և զգացմունքների արտահայտման, աշխարհի ճանաչման հզոր միջոցներ: Նրանք իմանում են, որ արվեստներից յուրաքանչյուրն ունի իրականության արտացոլման իր լեզուն, իր արտահայտչամիջոցները: Երաժշտությունը ինտոնացիոն և ժամանակային արվեստ է: Կոմպոզիտորը, օգտվելով երաժշտության այդ յուրահատկությունից, կարողոնում է յուրօրինակ կապեր ստեղծել արվեստի մյուս տեսակների հետ:

Հինգերորդ դասարանում ավելի կոնկրետ է ուսումնասիրվում արվեստների փոխկապակցվածությունը և փոխներգործությունը: Ցույց են տրվում, որ արվեստների այդ տեսակները ոչ միայն կապված են իրար հետ ներքին տրամադրությամբ, այլև դրանք լրացնում և օգնում են միմյանց ավելի լավ արտահայտելու իրենց մտքերը, տրամադրությունները՝ դյուրին դարձնում արվեստների ընկալումը և հասկացումը:

Աշակերտները իմանում են, որ առանց գրականության, պոեզիայի հնարավոր չէ

ստեղծել երգ, օպերա, բալետ, կանտատ և այլն: Նրանք գիտակցում են նաև, որ երաժշտությունը իր հերթին օգնում է գրականությանը, պոեզիային, որ երաժշտությունը հուզազգացմունքային լիցք է հաղորդում գրական կերպարներին և ուժեղացնում դրանց ներգործությունը մարդու վրա: Այդ իսկ պատճառով, եթե չլիներ երաժշտությունը, աղքատ կլիներ նաև գրականությունը, պոեզիան:

Աշակերտները ծանոթանում են նաև պարարվեստին, իմանում են, որ այդ երկու արվեստները կապված են իրար և լրացնում են միմյանց, որ արվեստների այդ երկու տեսակները հանդես են գալիս որպես անհատի հոգևոր աշխարհի և մարմնի

շարժումների զարգացման մրջոց, որ մարդիկ միշտ երգել են և կատարել մարմնի որոշակի շարժումներ:

Արվեստի մյուս տեսակը, որին ծանոթանում են աշակերտները, դա կերպարվեստն է: Նրանք իմանում են, որ կա ոչ միայն ներքին լսողություն, որով մարդիկ «լսում» են չհնչող երաժշտությունը, այլև կա ներքին տեսողություն, որի միջոցով մարդիկ կարող են «տեսնել» այդ պահին չցուցադրվող նկարը: Ներքին լսողության և ներքին տեսողության զարգացումը, ստեղծագործական երևակայության զարգացման հիմքն է հանդիսանում, որն անհրաժեշտ է մարդուն ոչ միայն արվեստները հասկանալու համար, այլև կյանքում՝ տարբեր բնագավառներում:

Աշակերտները հասկանում են, որ արվեստների արժեքը նրանց գեղեցկության մեջ է, որը ներգործելով մարդու վրա՝ նրա մեջ առաջ է բերում գեղեցիկի, բարու զգացողություն, զարգացնելով գեղագիտական ճաշակը: Իմանում են նաև , որ երաժշտությունը թատրոնում և կինոյում կատարում է խոշոր դեր: Այմ բացահայտում և լրացնում է թատրոնի և կինոյի բովանդակությունը: Վերջապես աշակերտներն իմանում են, որ երաժշտության, գրականության, պարարվեստի, կերպարվեստի միասնությունից են ծնվել օպերան,բալետը,թատրոնը և կինոն:

Վեցերորդ դասարանում աշակերտները ավելի են խորացնում իրենց տեսական գիտելիքները, երբ իմանում են, որ կոմպոզիտորը, օգտվելով երաժշտական լեզվի արտահայտչական հարուստ հնարավորություններից, ստեղծում է մեղեդիներ, որոնք արտահայտում են բազմապիսի զգացմունքներ ու տրամադրություններ:

Այս սկզբունքով երաժշտության դասերին հնարավոր է դառնում աշակերտների երաժշտական մտածողությունը դարձնել ճկուն, ստեղծագործական, որն իր հերթին նպաստում է երաժշտական արվեստի բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելուն:

Յոթերորդ դասարանում աշակերտները ծանոթանում են հայ հոգևոր երաժշտությանը, հայ հոգևոր երգերին, որոնք իրենց մեղեդիների գեղեցկությամբ և կառուցվածքի կատարելությամբ վկայում են միջնադարյան Հայաստանում երաժշտական արվեստի բարձր զարգացման մասին: Ծանոթանում են գուսանական և աշուղական երգարվեստին, որըոնք հայ երաժշտական մշակույթի ճյուղորից են: Ծանոթանում են դասական /ակադեմիական/, ջազային և պոպ-երաժշտություն հասկացություններին: Նպատակն է երաժշտության այդ երեք տեսակների համադրման միջոցով աշակերտների մեջ զարգացնել կյանքում հնչող բազմատեսակ ու խայտաբղետ երաժշտության մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ուսումնասիրելով և վերլուծելով այս թեման կարելի է ասել, որ աշակերտները գիտակցում են, որ երաժշտությունը իր պատվավոր տեղն է գրավում ազգային մշակույթում, որ արվեստի տեսակները կարող են արտահայտել, նկարագրել և պատկերել: Արվեստները չէին կարող կատարել իրենց դաստիրակչական ճանաչողական դերը, եթե օժտված չլինեին մարդուն գեղագիտական բավականություն պատճառելու հատկությամբ: Ծանոթանալով երաժշտական ժանրերին ,դրանց կառուցվածքին, երաժշտության զարգացման ընթացքին, լուրջ և զվարճական /թեթև/, ինչպես նաև ջազային երաժշտական ուղղություններին՝ սովորողները կարողանում են ճիշտ կողմնորոշվել այսօրվա խայտաբղետ երաժշտական աշխարհում: Նրանք հասկանում են, որ արվեստների, մասնավորապես երաժշտության հետ սերտ շփումը մարդու համար դառնում է պահանջմունք, հարստացնում նրա ներաշխարհը, բերկրանք և հոգևոր բավարարվածություն պարգևում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն - Մ.Ա.Բրուտյան
,,ԼՈՒՅՍ,, հրատարակչություն Երեվան 1971

2.Երաժշտությունը 5-7 դասարաններում - ուսուցչի ձեռնարկ
Երեվան 2011

3. Հայ ազգային նվագարաններ - Կ.Միրզոյան

4. Երաժշտությունը 1-4 դասարաններում - ուսուցչի մեթոդական ձեռնար
Յու.Յուզբաշյան Ա.Փահլեվանյան, Վ.Ավետիսյան
,,Զանգակ-97,, հրատարակչություն

5. Հովսեփյան Վ.Ա. ,,Գեղագիտական ուսմունքների պատմություն,,

6. Երաժշտություն առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր
Յու.Յուզբաշյան, Ա.Ավետիսյան, Վ.Փահլեվանյան
01.11.2007թ.